ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի «Քիմիա» /16 դասաժամ/, «Անգլերեն» /8 դասաժամ/, «Երաժշտություն» /9 դասաժամ/, «Ֆիզիկա» /18 դասաժամ/, «Մաթեմատիկա» /11դասաժամ/, «Բնություն» /7 դասաժամ/, «Ռուսաց լեզու» /3 դասաժամ/, «Աշխարհագրություն» /15 դասաժամ/, «Բնագիտություն» /8 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատ րությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ « Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /Ձև 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **ս/թ դեկտեմբերի 12-ը** ներառյալ, ամեն օր՝ 9:00-ից մինչև 15:00 բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **դեկտեմբերի 17-ին, ժամը 15: 00-ին** Խաչփարի միջնակարգ դպրոցում, հասցեն ՀՀ Արարատի մարզ գ. Խաչփար , 5-րդ փող. 15շ :

Տեղեկությունների համար զանգահարել 055-131-211 հեռախոսահամարով: